

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որ եւ է


գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրին ԱՐՇԱՒՈՅՍ Իրազրի ԳԱՂԻՐԷ (Նսահախառնի) Թիւ.

E. TOROSSIAN

Dirac.-propr. du journal arménien

ARCHAEOLOGIE LE CAIRE (EGYPTE)

Boîte Postale No.



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՉԱՐԱՐ	
Ճարեկան ոչը դահկն.	60
Վեցսահեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Ճարեկան Տրանս	20
Վեցսահեայ «	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆՈՒԿ ԵՒ ԹՂԹՈՒՄԱՐԻ ԺԱԽՔԸ ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Ե՛ :

ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՂՈՒՄԸ ԳՐՈՒԽՆԵՖ ԵՍ չ՛ԱՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի են

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մինչդեռ քաղաքակիրթ Եւրոպայի գըրեթէ ափանց վրայ, լուսաւորեալ Եգիպտոսի մէջ Հայոց յառաջդիմասէր կարծուած կամ ինքզինքնին այսպէս յորջորջելու վարժուած անձանց ոմանց կողմէն մահու վճիռ կ'արձակուի դեռ մի ամեայ ընկերութեան մը դէմ, որ՝ անցողաբար ըսելով մահուան այդ դատակնիքէն ազատելով, նոր ուժ և նոր կորով ստացաւ շնորհիւ քանի մը մշակներու, մթնշաղկու բզէզներու և մոլեռանդներու. մինչդեռ կ'ըսենք՝ հոս ընկերութեան մը շուրջը անձամուլութիւն անձնուրացութեան դէմ. քսակասիրութիւն՝ ընկերութեան դէմ մուկերն պատկերադմներ կը մղեն, անդիէն Արեւելքի խորերէն, մարդկութեան օրրանէն, խաւարեալ և բարբարոս Պարսկաստանէն մեզի կը հասնի ուրախաւիթ և միտմարիչ լուր մը՝ տետրակի մը ձեւով :

Միամեայ տեղեկագիր և հաշուեկրչիուն է դա ԹԱԻՐԻՉԻ ՀԱՅՈՒՆՆԵՍ ԲԱՐԵՎՈՐՇԱՒԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որուն անունն ու գոյութիւնը թերեւս առաջին անգամ ըլլալով կը լսեն մեզմէ խիստ չասերը, մանաւանդ մեր գեղեցիկ սեւի ներկայացուցիչները :

Բայց մեր նախահարց Թաւրիզաբնակ թուները բնաւ հոգ չ'ընելով մեր տգիտութիւնը իրենց ստանձնած կամ յանձնուած գործը շարունակած են, և պէտք է ըսել թէ՛ գնահատելի արգիւնքներ յառաջ բերած են :

Տեղեկագիրը կ'սկսի Պարսկաստանի վերջին տարիներու տնտեսական նեղ վիճակէն. « գեռ մինչեւ այսօր ցորենի խալվարը 30 թումանից պակաս չ'է Թաւրիզում. հայ չ'կայ շատ անգամ » ըսելէ որ սով կայ :

Այս դժուարին կացութեան մէջ Թաւրիզ ալ ունեցաւ իր « Վասպուրականցի ամեն հասակի », սեւի ու վիճակի գաղթականներ . . . մեծ մասը կանայք ու երեխաներ :

« Թաւրիզը այսպիսիներին ասպարէզ չ'է կարողացել տալ ». հետեւաբար Ընկերութիւնը « օգնութեան հասաւ. անունը, ըզգեստ, անցագիր ու ճանապարհածախս տալով ուղարկեց՝ ուր որ գաղթականները ցանկանում էին. » ծախսելով ընդ ամենը 4258 Ղւան 60 կոպէկ :

Բայց չի մոռցուեցան տեղացի աղքատիկ ընտանիքները, որոնք « սովի ու անյուսութեան ճանկերին » մատնուած էին հացահատիկի նուազութեան պատճառաւ :

Ընկերութիւնը ամառ ձմեռ հոգաց այն բազմազուրկ էակները, անոնց « տալով գրամական նպաստ, չոր ու հաց » : Մասնակցելով 1606 Ղւ. 5 կոպ . .

Ասկէ զատ իբր նպաստ զրկեր է նաև 1127 Ղւ. 30 կոպ . « Ախալքալակի անբաղդարկածեալներին » :

Ընկերութիւնը՝ ինչպէս ամեն տարի նոյնպէս և այս տարի 4884 Ղւ. վճարեց այլ և այլ ուսումնարաններու ձրիավարժ աշակերտուհիներուն իբր տարեթոշակ :

Ատրպատականի հինգ գիւղերուն մէջ բացաւ ուսումնարաններ. երեքը երկսեռ, 4 տարուայ շրջանով » :

« Ատրպատականի հայ գիւղացու այս միակ փրկութեան գործը անտարակոյս կը այժմանայ հայ բարերարների լուրջ ուշադրութեանը » : Մայթե՛նք :

Վերոյիշեալ « 5 կրթարաններում այս տարի սովորել են երկու սեւից 177 գիւղացի մանուկներ՝ զուրկ մտաւոր կեանքից ու կրթութիւնից » :

Ընկերութիւնը այս տարի պիտի բանայ նաև Խոյ քաղաքին մէջ ուսումնարան մը, որուն 60 թուման տարեկան նպաստ խօստացուած է երկու կրթասէր ազգայիններու կողմէ :

Վարչութիւնը ընդունեց ռուսերէն քարտէզներ զոր Ս. Պետերպուրկէ խրկեց Պ. Լ. Տիգրանեան և պատկերազարդ մանկական գրքեր Հրատարակչական Ընկերութեան կողմէն : Թիֆլիզէն երեք երիտասարդներ զրկեցին նաև 600 հատ ընթերցանութեան գրքեր « գիւղերում Գրադարան-Ընթերցատուններ հիմնելու համար » :

Եւ անմիջապէս այդ հաստատութիւնները հիմնուեցան— ո՛չ թէ շրջուն այլ անշարժ կերպով— երեք տարբեր գիւղերում մէջ :

Այս առթիւ Պատ. Ընկերութիւնը կը խնդրէ Մամուլի, հեղինակներու և թարգմանիչներու քաջալերութիւնը :

Ընկերութիւնը կար ու Չեւի արհեստանոց մը, մանկապարտէզ մը, գորգագործատուն մը ունի Թաւրիզի մէջ : Գորգագործատունէն մինչև այժմ՝ ելած են տասը կանայք ու Օրիորդներ . « որոնք յաղորդութեամբ կարող են գորգ գործել » : Բայց ցաւալի է որ այս հաստատութիւնը դադարած է « առ այժմ » վասնզի « գորգա-

գործութիւնը գնալով շատ աւելի ընդարձակ չափեր ստացաւ Թաւրիզում և անկարելի է մրցել թուրք ազգայնակութեան հետ. հետեւաբար շատ ծախս էր պատճառում Ընկերութեան գանձին » :

Մանկապարտիզին մէջ կան 21 երկսեռ մանուկներ երեքը միայն թոշակաւոր : Գրանութիւնը գոհացուցիչ եղաւ :

Կար ու Չեւի Արհեստանոցը ունի 18 աշակերտուհիներ, որոնց 7 հատը ձրիավարժներ : Մայիս 19 ի հրապարակային քննութեան մէջ չորս օրիորդներ վկայագրեր ստացան իբր ընթացաւարտ :

Երբ Վեհափառ Շահը Թաւրիզ այցելեց իր դէպ յ'Եւրոպա ուղևորութեան միջոցին, Առաջնորդ Սրբազանի և Վսեմ Մատուր Խան Սէթ-Խանեանի միջոցաւ նորին Վեհափառութեան և Սատրապմին մատուցուեցաւ մէյ մէկ ընտիր ձեռագործ, ընկերութեան արհեստանոցին մէջ պատրաստուած և մէյ մէկ Պարսկերէն ուղերձ :

Շահը մեծ համակրութեամբ ընդունեց նուէրն և ուղերձը, և Սատրապմին բերանով խօստացաւ, Եւրոպայէ վերադարձին ըստ արժանւոյն քաջալերել սոյն բազմագուտ հաստատութիւնը :

Անօգուտ կը գտնենք Հայուհեաց այս ընկերութեան արժանիքն ի վեր հանել. Եղեղութիւններն արդէն բաւական պերճախօս են, և բացատրութեան ոչ կարօտ :

Սակայն տիրութեան շեշտ մը կայ այս տեղեկագրոյն մէջ. ինչո՞ւ : Վասնզի հոն ալ կայ լուսաւորեալներու մասնաւոր դասակարգ մը, որ այս ընկերութեան վարչութիւնն ու անդամները կազմող բզեզ . . . և այլնները ջախջախել, կոտորել, փոշիացրնել, ոչնչացնել կ'ուզեն. և այս ալ խիստ բնական է . . . բնազն է որ կը գործէ :

Իսկ մենք մեր անկեղծ յարգանաց և սքանչացման հաւաստիքը մատուցանելով ազնուասիրտ և վեհագի Հայուհեաց, կը խնդրենք որ անյուզող շարունակեն իրենց ճարման, վստահ ըլլալով որ իրենց արարքին քով պիտի նսեմանան խել մը դիւցազնական (*) շահատակութիւններ :

Ե՛րբ բարեբաղդութիւնը պիտի ունենանք հոս արձանագրելու տեղեկագիրք . . . Գահիրէի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան :

Օ՞ն, Տիկիննե՛ր, Յառա՛ջ :

Պ .

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵԱՆՔԸ

ԿԻՆԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բաւական Ժամանակ Պոլիս սպարած եմ. ան ատեն, ընդունուած ընդհանուր կարծիքին համաձայն, կը խորհէի թէ աշխարհի գեղեցկագոյն քաղաքին մէջ կը գտնուէի. այս զգացումը տեսակ մը գոհունակ հեշտութիւն կը պատճառէր. հիմա այդ գաղափարս բարեփոխել պարտաւորուած եմ. ասիկայ չի նշանակէր թէ Վոսփորի ասիւրն հրապուրել ըլլալէ դադարած են. ընդհակառակն անոնց բնական գեղը անհաւասարելի է միշտ եւ ով որ մանաւանդ լուսավառութեան գիշեր մը այդ չքնաղ սփերուն տեսարանը վայելելու երջանկութիւնը ունեցած է, առ յաւելտ պիտի պահէ համապատկերին դիւթական տպաւորութիւնը. բայց փորձառութիւնը ուսուցած է ինձ հիմա թէ՛ գեղեցկութիւնը այդ խորհրդաւոր մայրաքաղաքին միջանցորդը չէ. եւ երբ զուտ բնական տեսարանին առընթեր կ'երեւակայինք, ինչ որ մարդկային արուեստը կ'ըցած է արտադրել կեանքի վայելքը աւելի եւս հեշտացնելու համար, Պոլիս կամ ո եւ է տաճկական քաղաք բաղադրութեան ամեն արժանիքէ զրկուած կըլլայ. եւ եթէ ասոր վրայ ալ աւելցուի քաղաքի մը բարոյական, քաղաքակրթական նշանակութիւնը, առաւելութիւնը ամբողջ Արեւմտեքի կողմը կը մնայ: Մի քանի տարիներէ ի վեր Պոսթոն կը գտնուիմ. ժամանակին այս քաղաքին անունը միայն գիտէի, իւր աշխարհագրական իմաստով, որչափ աւելի հոս կը գտնուիմ, նոյնչափ աւելի կ'սկսիմ ճանչնալ ու գնահատել այս ճշմարտապէս մեծ քաղաքը որ իրաւամբ Միացեալ Նահանգաց Աթէնքը կոչուած է:

Պոսթոն ընդունուած է իբր ամբողջ Ամերիկայի ամենէն աւելի յղկուած, փափկացած ոստայնը. զայս ըսելու համար ջանք մը ընելու պէտք չ'իմ զգար. առաջին տպաւորութիւնս բաւական եղած է:

Պոսթոն իւր կրթական, դասական երեւոյթը պարզելէ առաջ, շարունակուած է զիս իբր գեղեցկութեան երազ մը, իբր շնորհի մատախարար մը: Եւ իրօք համապատկերին ազդեցութիւնը անմոռանալի է. այսպէս մտածել ներքի է երբ ոք ամբան առաւօտ մը, անասկ հրկինքի մը ներքեւ, վարդագոյն ծիրաներովուած, դիտած է պատուհանէ մը, չքնաղ Չարլզ Րիվըրը արեւին առաջին ճառագայթներուն ներքեւ. համակ աղամանդներով պարզուն:

Պոսթոնի Վոսփորը կանուանում եւ զայն թէեւ զուրկ անոր օձապտոյտ ընթացքէն եւ ա-

ւելի ծովու մը նման քան նեղուցի մը կամ գետի մը, արշալոյսի ու վերջալոյսի տեսարաններու իւր հիմնալի գեղեցկութեամբ իւր ուրոյն տեղը կը գրաւէ աշխարհի նշանաւոր տեսարաններու կարգին մէջ. բայց իմ նպատակս չէ խօսիլ մասնաւորապէս այս քաղաքին վրայ իւր գեղեցկագիտական տեսակէտով, որչափ ալ թելադրական ըլլայ Չարլզ Րիվըրի արեւափայլ ջրասաւանը, որչափ ալ ներշնչող ըլլան քիչ հեռուն, մեծ կամուրջէն անդին, ծառախիա բլրակները ու պուրակները, թղթակցական յօգուածի մը անձուկ սահմանը չի ներքէր անոնց վրայ ծանրանալ. եւ կ'առաջադրեմ քանի մը խօսք ըսել տեղույս իմացական կեանքին մանաւանդ իգական շարժումին վրայ որ այլապէս շահագրգռական նիւթ մ'է. բայց այս յատուցարանը փակելէ առաջ կը փափաքեմ քանի մը բառ եւս աւելցնել այս քաղաքին պատմական նշանակութեան վրայ. քաղաքին հին մասը, անկանոն, մասնաւորապէս, անգլիական ոստանի մը կը նմանի. հեռագրի, հեռաձայնի, եւ ուրիշ գիտական երկաթ գծերու խառնաչափ ճիւղաւորումը միայն տեղույն ամերիկեան բնութիւնը կը մտնէ. բայց բնակութեան մասին մէջ կան նորակերտ ընդարձակ փողոցներ, ծառադիւղներ, չքնաղ սպարանքներով եզրուած որոնք մղոններով եւ նոյն օրինակ շքեղութեամբ կ'երկարաձգին եւ հեշտիւ կը մըցին եւրոպական որ եւ է փառաւոր պողոտայի հետ. ոչ մի զրդուուն գարդանկար չի պահուած շէնքերուն ճարտարապետական պատկաւազրու կանոնաւորութիւնը:

Տուները ընդհանրապէս փափկօրէն չըջապատուած են տեսակ մը ճարտնական մազլոցող ստեղծով որ «Պոսթոնի բաղեղ» կ'անուանի. իր կարմրափայլ հովանին, որ ամեն աշնան բուստի գոյն մը կ'առանայ գոգոցես ժպիտի մը զուարթութիւնն ունի. ապակիներուն ետին կարգահատեալ ծաղիկներով վարագոյր մը, կը յայտնէ յաճախ վայելչութիւնը այն պերճ սրահներուն ուր խօսելու արուեստը իւր փափկագոյն արտայայտութեան հասուցուած է:

Պոսթոն եւ Ֆիլատեֆիա ամենէն փայլուն մասնակցութիւնը ունեցած են Ֆեդափոխութեան գործին մէջ:

Այսօր սակայն այս պատմական քաղաքը իւր գափնիներու շքեղութեանը գիտակից փոքր ինչ գաւառական կղզիացի ման ձեւեր կ'առնէ, բայց այս գաւառական երեւոյթը, զոր կը մեղադրին անոնք որ իւր գրական բնկերակցութիւններէն զուրս կը գտնուին. ինքնին ճշմարիտ հրապոյր մ'է:

Պոսթոնը տեսակ մը աւանդաբանն է երկրի մը մեծ յիշատակներուն. որուն պատմութիւնը տակաւին շատ համառոտ է: Բոլոր նշանաւոր

յեղափոխականներու դամբարանները հոս են, հին գերեզմանատան մէջ. հոս է յիշատակաւոր Պընքըր-Հիլը. ուր Անգլիացի վարժ գործերը պարտուեցան երէկուան երկրագործներէն. հոս՝ դարձեալ Ֆանէօյլ-Հօլը, ամերիկեան ազատութեան օրրանը. որու պատմական բեմը կարճապէս միշտ ամեն արդար գատի բողոքը. վերջապէս Միացեալ Նահանգաց գերագահացապէս պատմական քաղաքն է. եւ ժողովուրդը, հանձարեղ միջոցներով գիտէ միշտ օգտուել այս յիշատակներէն, երկրին նոր սերնդեան միտքը Հայրենասիրական վեհանձն խանդով մը առ յաւելտ վառ պահելու համար:

(Շարունակելի)
Պոսթոն (Ամերիկա) Կ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ. — Սուլթանին քեռայրը Մահմուտ Փաշա Տամատ եւ երկու որդիքը կիրակի օրը Ալէքսանդրիա հասան Աւստրիական Պոնտիքի շոգենաւով: Մահմուտ Փաշա իր հետն ունէր նաեւ իր քարտուղարն եւ մարդիկներէն երկուքը:

Թուրք գաղթականութեան մի քանի անգամներ շոգենաւ գացին զայն ընդունելու համար: Կառք մը անոր կ'սպասէր քարափին վրայ:

Սուլթանին քեռայրը, երկու որդիները, եւ իրենց երեք մարդերը Օթէլ Ապպաթ իլան ձանապարհորդութեան միջոցին Մահմուտ Փաշա Տամատ դուրս չ'ելաւ իր խրջիկէն, որ նաւապետինն էր, եւ ուր մինակ կ'ուտէր: Իր երկու որդիները՝ մին 21 եւ միւսը 19 տարեկան՝ հիւրասեւանը կը ճաշէին, եւ ճամբորդներու հետ կը տեսակցէին: Շատ լաւ կը խօսին ֆրանսերէնը եւ անգլաւոստի մի կերպեր ունին:

Մահմուտ Փաշա Տամատ Օթէլ Ապպաթի սենեկէն ալ դուրս չ'ելաւ ամբողջ կիրակի օրը, եւ այցելութիւն չ'ընդունեց:

Շուպրայի Զուռլա Համրա թաղին մէջ շուն մը եօթնամեայ աղջիկ մը խածաւ: Իր ժիշկը հրամայեց աղջիկը քառասնօրեայ հրակողութեան մը ենթարկել հիւանդանոցին մէջ: Շունը սպաննուեցաւ եւ ստողծապահական վարչատուրը զրկուեցաւ ներազննութեան համար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԽԻՂՃԴ ՔՆՆԷ

Թրքական մոլեռանդ եւ վայրագ բարբարոսութիւններուն չը հանդուրժող Հայը, արհաւիրից օրերու մէջ, իր կեանքը, լիլիքը եւ նեղագուր պաշտպաններու խաբուստիքի համոզմունքներու չ'սուսացող Հայը. մահասարաւու զէպերու ժամանակ, հուրի, սուրի եւ կայրի սնողքը հարուածներէն մազապուր ազատուող Հայը. պահ մը զուրկ արեգակի լոյսը վայելելէ, նկուղի մը մէջ մութ սնկիւն մը քաշուած ու կծկուած, սիրտ ի թուեղ ու սարսափած, դառն արցունքի հեղեղները ուղիսօրէն վար թափելով աչերէն, օձապտոյտ գծերով յառաջ երթալով, կարծես վշտերու շտեմարանը ամբարուած ըլլային: Խելակորոյն Հայը տղայական փորձերով կը ջանար սրբել, ցամքեցնել գաննիք: Երկու ձեռքերով ամուրկիկ մը սիրտը բռնած կը սեղմէր, գոնէ մի քիչ յուզումը դադրեցնելու մտադրութեամբ: Աչքերը վեր վերցուց զէպի մութ ու սև առաստաղը սեւեռելով, ձեռները քակեց ու տարածեց, շրթները գոգալ սկսան. . . . խնդրուկ ձայնով մը կ'արտասուէր ու կը հեկհեկար. . . . կ'աղօթէր ան:

Երկարատեւ աղօթքը կը լմնար, վշտալից սիրտը մասամբ մը սփոփուած եւ խնդրածներուն

պատասխանները ստացած կարծելով, դուրս կեկէնք ու անմիջապէս աչքին կը ներկայանար կոտորածը իր բովանդակ արհաւիրքներով մէկտեղ ձիւ մը բարձրաձայն ու խոպոտ ձայն մը կ'արձակէր ան, չէ՛, չէ՛, վերջացած չէ՛ տակաւին ձայները դեռ դադարած չեն կը շարունակուի ջարդը, դեռ կը կատարուի Հերովդէսի հրամանը, մահու փոշին կը ցաննեն ամեն կողմ, ո՛հ, միշտիւ երբ. . . .

Արդեօք ո՞վ պիտի լուծէ այդ անմեղ արեւան վրէժը, ո՞վ ասոնց հատուցումը պիտի տայ. ո՞վ վրէժխնդիր պիտի կանգնի եւ ո՞վ վերջ պիտի տայ այդ բոլոր խժգժութիւններուն. . . . անտարակոյս Հայը:

Վշտալից Հայը վար իջած կ'աղօթէր. վեր՛ մահուան շարաշուք օրերուն մէջ կը գտնէր ինքզինքը: Հոն՛ ալ կը դադարէր աղօթելէ, տխուր տեսլապատկերներու շարք մը կը ներկայանար աչքերուն հանդէպ, վրէժ՛, վրէժ՛ կը գոչէր ան, վրիժառութեան վրայ կը խորհէր ու անոր միջոցները կը փնտէր: Բազմակուտակ հարցեր յաջորդաբար վեր առած, ինքն էր միակ պատասխանողը անոնց, բոլոր ով երուն. անթիւ ո՞վ պիտ ընէ ներուն ի պատասխան. կը գոչէր. . . . Հայը:

Արդեօք ի՞նչ կ'ուզէր հասկցնել, ի՞նչ պիտի ընէր Հայը. հայրենակիցներ՛, արդարութիւնը կ'ակնկալէր ան, արդարութիւնը, Հայը ինքն իր աշխատութեամբ ձեռք պիտի ձգէր ա-

նիկա: Հայը լսելի պիտի ընէ իր արդար բողոքի ձայնը աշխարհի ամենախուռ անկիւններն իսկ, եւ այն արդարութեան մէջ կը ծածանի գրօջը. դրօ՛շն ազատութեան, Այդ բոլոր հարցերու մէջէն կը պրպուէր ան ազատութեան հարցը, բայց անոնք խմբուած էին իրարու, եւ անոնց մէջէն վերջապէս պիտի ծնի ցանկալի ազատութիւնը:

Ազատութեան կարօտակէզ Հայը այս ամենը գիտնալով հանդերձ, անիկա ձեռք ձգելու աննշովը վառեալ, « ա՛խ. իցի՛ւ թէ ազատութեան տենջուլի ժամը տեսած՝ վայելած ըլլայի, անա այն ատեն զիս երջանկութեան ամենավերջին ծայրը հասած պիտի նկատեմ, ա՛խ, իցի՛ւ թէ. . . . իցի՛ւ թէ » ըսելով, մտածութեան ովկէանին մէջ կը խորատուգի: Միջոցը պիտի գտնէ, կերպերը կը խորհի, կը դատէ, կ'որոշէ, կը հարցնէ ու ինքը կը պատասխանէ, վերջնականապէս կը վճռէ ու պիտի գործէ:

Տուաւ որոշումը. ընարած ուղիով պիտի յառաջանայ, որուն միւս ծայրը հասած կամ չը հասած, բաղձանքը կատարուած պիտի ըլլայ, պիտի հասնի իր նպատակին: Սակայն ու՛ր է եւ ի՞նչպէս պիտի սկսի, ընարած է ան ալ — բռնապետական երկրէն դուրս, ազատութեան սահմաններուն վրայ. . . . — այնպէս կը հաւատայ ու պիտի ընէ: Խել մը տանն վերջ կ'ըստի. որոշումները անած է ու. . . . պիտի գաղթէ: Օրերը կը սահին, ամիսները կ'անցնին, բայց

—Մաթարիայի կառավարմանը երկու ժողովուրդի շահերը պահպանելու համար...

—Լորտ Գրոմեր Հոկտեմբեր 2 ին Բոր-Սայիտ կ'սպասուի :

—Մեր անցեալ թուով յիշատակած երկու Որբերուն վրայ հետզհետէ ստորգ տեղեկութիւններ կը հասնին մեզ, կը տեղեկանանք թէ՛ չորս տարեկան որբիկը կ'ամառական եղբայրը Ձակազիկի ներկայացուցիչը որդեգրած է :

ՆՇԱՆԱՐՈՍՈՒԹԻՒՆ

Կիրակի օրը, կէս օրէ յետոյ ժամը 4 ին, ի Ֆէկկալա Հաննա Ասիսի բնակարանին և զուտ ընտանեկան շրջանակի մէջ, տեղի ունեցաւ նշանախօսութիւնը, Մեծ. Տիար ԱՍՏՈՒՐ ԷՏԻՐՆԷԼԵԱՆԻ, ընդ օրիորդ ՄԱՐԻ ՏԷՐ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ:

Ազն. Օրիորդ Մարի՛ գուտարն է հանգուցեալ Մատուր Տէր Մարտիրոսեանի, որ իւր հօրեղբօր Հաննա Ասիսին կարեւոր գումար մը ժառանգելով իւր զաւակաց թողած է :

Տիար Ատուր Էտիրնէլեան երկար տարիներէ ի վեր պաշտօնեայ է Օրօզտի-Պար և Ընկերութեան քով : Այս տարիներու երկար շարքը բացարձակապէս կը հաստատեն անոր հաւատարմութիւնն ու գործունէութիւնը . և արդէն՝ հրապարակի վրայ ծանօթ եղող երիտասարդներուն ամենէն խոհմը, պարկեշտը, ազգասէրը և ընկերասէրն է :

Այս պատշաճաւոր նշանախօսութեան առթիւ մեր սրտաբուրդ շնորհաւորութիւնները կ'ուղարկենք երկու խօսեցեալներուն և իրենց ազգականաց :

զեռ անցած չէ սրտի յուզումը եւ զեռ սրտածրմալիկ ու աղիտաբոց տեսարանին ակնատես է : « Պիտի ընեմ » կ'աղաղակէ, գաղթականութեան ցուպը ձեռք առնելով ու կը յառաջանայ . ետեւէն ձայնը կը բարձրանայ — մեզ ալ, մեզ ալ կը գոչեն, բայց անկարող չարժեքու : « Այո, ձեզ ալ . . . ձեզ համար . . . ուխտս է այն », կ'ըլլայ պատասխանը ու կ'շտապէ ազատ երկիր :

Ու՛ր է Հայը, հարցնեմ անգամ մը, անիկա ազատութեան սահմաններուն վրայ կը դեպքեր ու պիտի գործէ : Գործելու ընդարձակ ապարէզ ունի իր առաջ, ազատ է, պիտի գործէ իր հայրենիքին համար . պիտի գործէ մահուան բոցը թողած թշուառ հայրենակիցներուն համար՝ պիտի գործէ արդարութեան յաղթանակը տանելու համար . պիտի գործէ իր խօսամասը համար :

Քիչ մը մօտ երթանք այդ հայուն, աւելի որոշ տեսնելու համար գործը : Ու՛ր է եւ ինչ կ'ընէ ան, ամիսներ անցեր, տարին բոլորեր, տակաւին նո՛ր պիտի գործէ :

Ինչ ու ուշացաւ Հայը, ետանդուն եւ մինչեւ իսկ հոգին Ազգի սիրոյն գոհող Հայը, ու՛ր է ան, ինչ կ'ընէ : Անիկա ուխտագրութեան եղած է, մինչդեռ անմեղ հայրու արեան հեղեղներուն մէջ կը քալէր, սիրաբ յուզեալ, աղիտութեան բռնուած, պատրաստ էր կեանքը վայրկենապէս գոհելու :

Նքը տակաւին ակնանառն էր կատարուած

ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻԹԻՒՆԻ

ԼՊԱՐԱՆ — Ըն ԻՆՐՅԱՏՈՒՆ Ընկերութեան Պատ. Կործարի Ժողովը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրներն և անոնց հրատարակութիւնը կը խնդրէ :

- Տիար Յարութիւն Արիարէ մէկ տարուան համար ԼՈՅՍ Շաբաթաթերթ :
» Գառնիկ Սիրունեանէ մէկ տարուան համար ԱՐԵՒԵԼԻ Օրագիր :
» Պետրոս Վարժապետեանէ մէկ տարուան համար ՄԱՍԻՍ Շաբաթաթերթ :
» Միքայէլ Միսաքեանէ մէկ տարուան համար ՀԱՅԵԼԻ Զուգարութիւն :
» Յովհաննէս Պէզիրճեանէ 27 Հատոր գիրք և անարակներ :
» Տիգրան Մարտիրոսեանէ 15 Հատոր գիրք
» Միքայէլ Միսաքեանէ 4 »
» Առաքել Էվլիեանէ 4 »
» Ծղլիկէ 1 »
» Գեղամ Գրիգորեանէ 1 »

Գումար 53 Հատոր :

Առժամեայ կերպով Լարան - Ընթերցասանս տրամադրութեան ներքեւ գրուած գրքեր :

- Տիար Միքայէլ Միսաքեանէ 17 Հատոր գիրք :
« Տիգրան Մարտիրոսեանէ 18 »
« Առաքել Էվլիեանէ 1 մէկ »
« Ներսէս Գրիգորեանէ 1 մէկ » :
Ի դիմաց Գործ. Ժողովոյ Ատենապարտ Ատենապետ Օ. ԹՈՒՄԱՆԵԱՆ ՏՐ - Գ. Թ. ԷՎԼԵԱՆ Գահիրէ 13 Սեպտ. 1900

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի Տ Ա Լ Ի Ա

—Ումպերթօ Թագաւորին սպաննուելուն առթիւ, իբր անիշխանական 2200 անձինք ձերբակալուած են Հազարի չափ անձեր ալ՝ առանց անիշխանական ըլլալու՝ բանտարկուեցան, վանդի արքայապանութիւնը նորոգած էին կամ այս ոճիւրը ըստ բաւականի պարտաւած չ'էին :

Ա Ն Գ Ղ Ի Ա

—Մովսէսի նախարարութիւնը փորձել կ'ուտայ նաև մը որ ընդձովեայ նաւերը հալածելու ստիճանուած է : Այս նորատեսակ նաւու մասին ամենախիստ զաջլտնիք

անթիւ նախձիններուն, սիրաբ յօ՛շ, յօ՛շ դարձած, « ա՛խ գործ մը կ'ընայի ընել, գործ մը, ես ալ գոնէ վրէժս լուծելի . երանի՛ թէ պահ մը ազատութեան ժամեր ունենայի ու բան մը ընէի » ըսող Հայը, այսօր ազատ երկրի մէջ կ'ապրի բայց անտարբերութեան ծայրայեղութեանը հասած է : Մոռցած է ան հայրենիքի վիճակը, մահաւանդ այն վերջին ողբալի հառաչանքներն՝ որոց առջև ուխտ ըրաւ . . . ԳՈՐԾԵԼ :

Մէկը աչքերովը տեսաւ ու ցնցուեցաւ . բայց երբ ազատութեան գիրքը մտաւ՝ մոռցաւ ամեն բան . միւսը՝ լսեց ու չ'հաւատաց, անդին ուրիշ մը իմացաւ՝ բայց երբ մը կարծեց եւ վերջապէս՝ շատեր լսեցին եւ անտարբեր դառնուեցան :

Ուրեմն Հայաստանի որդիներ, միացէ՛ք ձեր թշուառութեանը մէջ, անորակելի սանջանքներ թող ալ աւելի կրճեն ձեզ, ձեր բաժինն է այն : Լսեցէ՛ք Հայրենիքի զաւակներ, ձեր հեղձամըղձուկ ձայները հասան արտասահմանի Հայուն աւանջը, բայց մտիկ ընողներ չ'եղան . ձեր կարմիր երկիրը հրազոյն նկարագրեց ամեն բան, տեսնուեցաւ, բայց անտարբերներ իրենց պաւանները հիւսեցին : Օր մը ձեզ ձեռք կարկառողը այսօր լոկ հանդիսատեսի դեր կը կատարէ : Բայց մի՛ վհատիք, ապագան ձերն է, Հայրենիքի փառքն ու պարծանքը ձեզ կը պատկանի, ինչու որ չէ՛ք թողուր որ փչին անոնք : Բա՛յց տխուր էք . գրեթե՛մ ինչու :

պահուեցաւ . նոյն իսկ պաշտօնական գիրքի տէր անձինք կ'անդիտեն այս դիւտին եղանակը :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

—Լուստեղեակ շրջանակներու մէջ կը կարծուի որ Ռուսիա կրնայ բացարձակապէս վստահ ըլլալ որ Յարանսա և Ամերիկա իր առաջարկութիւնը պիտի ընդունին, և յայտ ունի ձաբանի հասանութիւնն ալ ստանալու : Յուսահատուած չ'է նաև Կերմանիոյ և Անդղիոյ հաճութիւնը առնելու խնդիրը . բայց եթէ այդ տէրութիւնները չ'հաւանին ալ, Ռուսական կառավարութիւնը չ'պիտի դադարի պնդելու իր զօրքերը Բէքինէն քաշելու սրոյնան վրայ :

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բէքին 17 Սեպտ. — Օտար գեսպաններու ժողովի մը մէջ որոշուեցաւ սր իշխանութիւն չ'ունին իշխան Շինկի հետ բանակցելու : Թիէն-Չին կը փոխադրուի Ռուսական գեսպանատունը, որ զօրագուններու սպարապետին կայանը պիտի ըլլայ :

Ընտրա 17 Սեպտ. — Շանկի հայէն Սթանսարս կ'իմանայ որ Անդղիացի սպաներուն Ռուսներուն ձաբանցիներուն ստորագաս ըլլալը գէշ ազդեցութիւն կ'ընէ Հնդկական զօրագուններուն մտքին վրայ :

Լահէյ 17 Սեպտ. — Հօլանտական կառավարութիւնը հեռագրով առաջարկեց Պ. Գրիւկէրին, զայն Հոլանտա փոխադրել Հոլանտական մարտանաւով մը :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 7817, 5386, 1179, 6293, 4251, 845; 6276, 1580, 2867, 3466, 6907, 8647; 4418, 3043, 5839, 2702, 6204, 6929; 5821, 423, 3410, 5274, 7194, 6960; 1725, 1359, 2742, 8371, 6965, 5530

Սոյն վիճակահանութեան առաջին պարզեք 1000 ֆրնք. չահած են Ապտիւլ Լաթիֆ-էլ-Եահու և Ընկերութիւն :

Տխուր էք . ձեզ ուրացող Հայուն համար . ուխտը դրժող երիտասարդին համար . ճամբայ չ'ցուցնող գիտունին համար . չ'կուտող քաջին համար . դանդաղ յեղափոխականին համար . խաւարամիտ եւ ետամուկ կղերին համար . խիղճը չը քննող անհատին համար . չը գործող, թմրեալ ու կղզիացեալ Հայուն համար տխուր էք . ահա՛ ձեր տխրութեանց պատճառները : Այո՛, հայրենակիցնե՛ր, իրաւունք ունին տխրելու մեր այսչափ թոյլ ընթացքին հանդէպ :

Ելի՛ր, ով Հայ, ելի՛ր, Հայաստանի եւ մեր Հայրենակիցներուն դժբաղդ վիճակը նկարագրեմ քեզ : Պահ մը գոցէ աչքերդ, երեւակայական անցքերը պիտի առաջնորդեն քեզ, ելի՛ր՝ ու քալէ : Գուրս ելի՛ր այդ փառապանք երկրէն, անոր ազատութեան աստղագաղղ գրօշը թող չը քանանի քո գլխուն վրայ, ինչու որ դու ազատութեան որդի չ'ես տակաւին : Կանգնէ՛ Ազատի գիւղի կողքը, դիտէ անոր ընդարձակածաւալ մակերեսոյթը, հոն ձուկերը իրենց բացալըրիկ խորներով ջուրը կը պրպտեն ու փոքրիկ ալիքներ կը շինեն : Նաւը արագութեամբ կը սուրայ ջրի մակերեսոյթին վրայ, ետեւէն երկար ծիւր մը յետաձգած : Այս ու այն կողմ՝ գիժադրիչ զօրութիւններու բաղխուելով ջուրը, վեր կը ցայտէ, կը սրկի ու արեգակի ետեւն արեգան ճառագայթներուն տակ երկնքին գոյներով հազար ու մէկ ջրլացմունքներ կ'արտայայտէ : Այս ամենը Ովկիանը կը զարդարեն ու կ'սքանչացնեն :

(Շարունակելի)

Նիւ Եօք U . Կ . ԱԼԻՓՈՒՆԱՐԵԱՆ

Ա Ձ Դ

Գլխի Օրօր գլխի Ազգայիններէն Տիար Մարտիրոս Եանօեանի որդի Պ. Կարապետ Եանօեան 26 ամեայ Երիտասարդը Հայաստանը դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէական ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի այդ Երիտասարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ. Ազգայիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտասարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին, բարեհաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինութեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահմանի Պատուարժան պաշտօնակիցներէն, որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկնել իրենց թերթերուն մէջ. ի հարկին նըմանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պարսիկ եւ Նուագածուաց խելի Զօրանցիկ ձիոց դիւանքը

ՕՂԱՆՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ ԵՒ ԳԱՆԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ ազգայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան դիմել ԵՓՐԱՏ ՍՐՃՍՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և խնամով զարգարած և յաճախորդաց հանգիստը ինկատի ունենալով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ գըրած է :

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելեաց ամենամաքուրները. ընտիր և թարմ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ :

Մասնաւոր խնամքով կը պատրաստուին ան արգաթան և չամչարակ (խոշապ) :

Հոն գիմող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան :

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՆՅՈՐԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՉ

Ականաւոր և ինքնակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գինի փափաքողներն կամ՝ բաժանորդագրուիլ ուզողներն, կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՆ ԱԶԻԶԻ ՍԿԻՋԲԸ

Օտանիյի դեղատանին դիւանքի փոփոխի մեջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8 : ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջաքերակներ, Գիտեր, Հրաշխարտեր, Մահազրկեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ.

—Մեր մրցակիցներուն արդէն մեզմէ առած դասերէն օգտուելը տեսնելով այս անգամ բոլորովին նոր բան մը սորվեցուցած ըլլալու գոհունակութիւնը վայելելու համար, ԱՐՇԱԼՈՅՍԻ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ» ին վրայ երկու նոր ճիւղ ևս աւելցուցինք. այն է՝ ԳՐԱՏՈՒՆ, — ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՈՒՆ : Հիմնեալ 1 Սեպտեմբեր 1900 :

Ա պօս անքանատո սայի՛ւ . . . : Ու մեր կողմանէ կ'աւելցնենք հպարտօրէն . Ընդօրինակողներ, մեր հետեւող սովորաբար անքերի՛ գործադրեցիք :

ՀԱՅ ՃԱՅԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԱԲ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ՇԱՐԻԱ ԱՊՏԻ — ՍԱՊԱՀ

Նեով — Իւնիվերսի Դեղատանին դիւանքը

Որ և է կերակուր ախորժակով և սընդարար ըլլալու համար պէտք է, մսի, իւղի, բանջարեղիւնաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համոզմամբ որ անդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ով որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր ախորժակին թշնամանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին :

Գիններն ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ :

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԳԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինպատիւրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընտրութենէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրահերէ

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՈՒՅԵԱՆ

Ի Շարեա Գրք-Պէյ, թիւ 20

Իր ՉՐԻ խորհրդակցութիւնները ասիկց վերջը, միայն ուղղաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. և.) 9էն 11 օրոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղ աղքատ հիւանդներու :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Ծերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՎԵՑԵՐՈՐԳ Փօրման ալ հրատարակուած է :

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7 :

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 9667, 6295, 1104, 9501, 8855, 6433; 563, 4406, 5287, 9157, 9821, 1527; 5289, 8286, 4458, 8944, 8693, 8811; 2320, 4665, 1870, 2699, 6919, 4305; 7406, 4371, 9024

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԱՐՈՑԺ

Ապսիկ Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր պարանջներով կեղծակաւներ :

Կը դադրեցնէ վարկեանայէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու ասորուոն համար կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովակին կը գանձէ :

ԱԼԷԻՍԻ ԱՎԻՉՈՒ ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՍՊԵՐՍԱՆՔԵՐԻԱ :